ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT
**DEPUTY MINISTER**

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

**№ 02/28.2/26349-2024**

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՂԵԿԱՎԱՐ ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆԻՆ**

Ի պատասխան Ձեր 2024 թվականի օգոստոսի 22-ի № 2465 գրության

*Հարգելի՛ պարոն Գյուլնազարյան*

Տեղեկացնում ենք, որ մասին, որ Հայաստանի Հանրապետությունում կրթական ծրագրերի լիցենզավորման գործընթացն իրականացվում է 2000 թվականի հուլիսի 7-ից, մինչ այդ՝ 1990 թվականից սկսած, կրթական ծրագրերով գործունեությունն իրականացվում էր ՀՀ լիազոր մարմնի կողմից տրված արտոնագրերով: ՀՀ-ում կրթական ծրագրերի հավատարմագրման գործընթացն սկսվել է 2000 թվականից: Լիազոր մարմնի կողմից «Արմավիրի «Արարատ» համալսարան» արտադրական կոոպերատիվին 1995 թվականի նոյեմբերի 1-ին 4 տարի ժամկետով, 1997 թվականի հուլիսի 16-ին 5 տարի ժամկետով բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով մի շարք մասնագիտությունների գծով տրվել է գործունեության արտոնագրեր՝ № 38 և № 40, արտոնագրերի ժամկետը լրանալուց հետո մասնակցել է լիցենզավորման գործընթացին և 2000 թվականի սեպտեմբերի 22-ի ՀՀ կրթության և գիտության նախարարության № 292-Մ հրամանով տրվել է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով գործունեության լիցենզիա՝ № 009: ՀՀ կրթության և գիտության նախարարության 2003 թվականի մայիսի 30-ի № 363-Ա/Ք հրամանով «Իրավագիտություն», «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա», «Ֆինանսներ և վարկ» մասնագիտությունների գծով տրվել են պետական

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Մուտք N 5160

հավատարմագրեր՝ № № 062, 063, 064, իսկ 2004 թվականի հուլիսի 27-ի № 550-Ա/Ք հրամանով պետական № 103 հավատարմագիր է տրվել համալսարանին:

Լիցենզիայի պարտադիր պայմանների և պահանջների ուսումնասիրության արդյունքում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 18-ի № 1312-Ա/Ք հրամանով կասեցվել է «Արմավիրի «Արարատ» համալսարան» արտադրական կոոպերատիվի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով գործունեության № 009 լիցենզիայի գործողությունը, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 27-ի № 444-Ա/2 հրամանով դադարեցվել է «Արմավիրի «Արարատ» համալսարան» արտադրական կոոպերատիվի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով գործունեության № 009 լիցենզիայի գործողությունը:

Ուստի «Արմավիրի «Արարատ» համալսարան» արտադրական կոոպերատիվի կողմից Մելանյա Լյովայի Կոստանյանին 2000 թվականին «Իրավագիտություն» մասնագիտության գծով, իրավաբանի որակավորմամբ տրված № 001016 գերազանցության դիպլոմը **ոչ պետական, արտոնագրված, չհավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրված փաստաթուղթ է:**

Տեղեկացնում ենք նաև, որ լիազոր մարմնի կողմից «Գրիգոր Զոհրապ» համալսարան» արտադրական կոոպերատիվին 1997 թվականին, 5 տարի ժամկետով, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով մի շարք մասնագիտությունների՝ այդ թվում «Իրավագիտություն» մասնագիտության գծով տրվել է գործունեության արտոնագիր՝ № 131, արտոնագրի ժամկետը լրանալուց հետո համալսարանը մասնակցել է լիցենզավորման գործընթացին և ՀՀ կրթության և գիտության նախարարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի № 339-Մ հրամանով «Գրիգոր Զոհրապ» համալսարան» արտադրական կոոպերատիվին տրվել է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրով մի շարք մասնագիտությունների գծով գործունեության լիցենզիա՝ № 168, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարության 2003 թվականի մայիսի 27-ի № 359-Ա/Ք հրամանով համալսարանին տրվել է պետական հավատարմագիր՝ № 068:

Ելնելով վերոգրյալից «Գրիգոր Զոհրապ» համալսարան» արտադրական կոոպերատիվի կողմից Անահիտ Վոլոդյայի Վարդանյանին 1996 թվականին «Տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագետի որակավորմամբ տրված

դիպլոմը **ոչ պետական, արտոնագրված, չհավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատության կողմից տրված ավարտական փաստաթուղթ է:**

Ինչ վերաբերվում է ՌԴ «Մոսկվայի սերվիսի պետական համալսարանի» կողմից տրված դիպլոմին, ապա հարցման պատասխանն ստանալուց հետո Ձեզ լրացուցիչ կտեղեկացնենք:

8/30/2024

X

ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: SVAJYAN ARAKSIA 6304780168 ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ

Կատարող՝ ՀՀ ԿԳՄՍՆ Լիցենզավորման վարչության
գլխավոր մասնագետ Օ. Գրիգորյան, հեռախոս՝ 010.599681